

Ճուղուր Երևանցի

ԹԵ ԻՆՉՈՒ...

ՀԵՔԻԱԹՆԵՐ
ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ


Կարդա և գունավորիր
9



Ճուղուր Երևանցի

ԹԵ ԻՆՉՈՒ...

ՀԵՔԻԱԹՆԵՐ
ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



ԷՂԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ


ԹԵ ԻՆՉՈՒ ԱՌԱՋԱՑԱՆ ՆՈՏԱՆԵՐԸ


Շատ տարիներ, անգամ հարյուրամյակներ առաջ մարդիկ չէին գործածում նոտաներ: Նրանք երգում ու նվագում էին առանց նոտաների, բայց, որ խոստովանենք, այդ ժամանակներում մի քիչ դժվարանում էին: Այ դու՛ք, սիրելի երեխաներ, խմբերգերի ժամանակ երևի նկատած կլինեք, որ մեկն առաջ է ընկնում, մյուսը՝ հետ, մեկը բարձր ու արագ է երգում, մյուսը՝ ցածր ու դանդաղ: Այդ խառնաշփոթ միջավայրում խմբերգը հաջող չի ստացվում, և ունկնդիրը հաճույք չի ստանում դրանից: Եվ այս խառնակչությունը ստեղծում են չարաձճի նոտաները, երբ չեն հետևում իրեց առաջնորդին՝ Սոլին: Իսկ թե ինչպե՞ս առաջացան նոտաները, և ո՞վ դարձավ նրանց առաջնորդը, դուք կհմանաք, եթե ունկնդրեք այս հեքիաթը:

Նոտաները յոթ եղբայրներ են՝ Դոն, Ռեն, Մին, Ֆան, Սոլը, Լյան և Սին: Ինչ էք կարծում, տարօրինակ անուններ ունեն, չէ՞, բայց շատ դարեր առաջ հենց իրենք են ցանկացել այդ անուններն ունենալ: Յոթ եղբայրն էլ այդ ժամանակ շատ էին սիրում միմյանց, օրերով թափառում էին անտառներով, սարերով ու ձորերով, լսում քանո սվավոցը, կարկաչող առվակներին, երգող թռչուններին և ոչ միայն հիանում էին բնության ձայներով, այլև փորձում էին հենց իրենք արտաբերել դրանք: Եվ ահա, օրերից մի օր, անտառի կախարդը նկատեց եղբայրներին և ցանկացավ խստագույնս խրատել նրանց.

– Հեյ, դու՛ք, ինչո՞ւ էք փորձում ձեր կոկորդներով առվակի ձայներ կամ թռչնի ծվլլոցներ հանել: Ի՞նչ է, չգիտեք, որ դրա







համար անտառի կախարդի թույլտվությունն է պետք: Թե՛ մոռացել էք, որ միայն ես կարող եմ թույլ տալ թռչուններին, գազանիկներին ու ծառերին իրենց հատուկ ձայները հանելու: Իսկ հիմա եկել էք անտառ ու ձեր ուզածն ենք անում, մարդուն հատուկ ձայները թողած՝ միմյանց հետ խոսում էք բնության հնչյուններով,– հոխորտաց կախարդը եղբայրների վրա:

Նրանցից ամենախիզախն ու իմաստունը՝ Սուրբ, հանդուգն պատասխանեց անտառի կախարդին:

– Մենք յոթ եղբայր ենք, ազատ մարդիկ, և անում ենք այն, ինչ հաճելի է մեզ համար: Ինչ կա որ, կարող ենք օրերով երգել ու թափառել աշխարհով մեկ, բնության ձայներ արտաբերել և բնավ էլ ցանկություն չունենք դրա համար թույլտվություն խնդրելու ինչ–որ անտառային կախարդից:

Լսելով Սուրբի համարձակ պատասխանը, անտառի կախարդը շատ վրդովվեց, զայրացավ ու չարությամբ պատասխանեց.

– Տեսնում եմ, որ շատ հանդուգն եք, հիմա ձեզ կպատժեմ, կկախարդեմ ու կզրկեմ մարդու կերպարանքից:

Անտառային կախարդը քթի տակ մրմնջաց մի քանի կախարդանքի խոսքեր, և այն քեզ հրաշք՝ յոթ եղբայրն էլ կարծես չքվեցին, անհետացան տեսադաշտից, փոխարենը դարձան անտեսանելի ու սկսեցին պտտվել կախարդի շուրջը: Չէին կարողանում մարդկային ձայներ հանել, փոխարենը նրանցից յուրաքանչյուրը մեկ զրնգուն՝ իրեն հատուկ հնչյուն էր արտաբերում:

– Հը՛, ինչպե՛ս եք ձեզ զգում, հանդուգն եղբայրներ: Հիմա ես ձեզ դարձրի երաժշտական նոտաներ՝ դրանով յուրաքանչյուրիդ թույլ տալով ընդամենը մեկ ձայն հանել, այնպես, որ ձեզանից բացի ոչ ոք չկարողանա արտաբերել այդ հնչյունը,– չարախնդաց անտառային կախարդը և հեռացավ:

Բայց, ավանդ, կախարդված և նոտաներ դարձած եղբայրները չէին կարողանում մարդկային լեզվով պատասխանել հեռացող կախարդին: Նրանցից յուրաքանչյուրը հուսահատ մեկ տարբերակիչ ձայն էր հանում, որից ոչինչ հասկանալի չէր: Փոխարենը, երաժշտական նոտաներ դարձած եղբայրները լավ էին հասկանում միմյանց և կարողանում էին երաժշ-



տության լեզվով խոսել իրար հետ:

- Այս ինչ փորձանքի մեջ ընկանք,- առաջինը խոսեց Դոն:-
Հիմա յուրաքանչյուրս ընդամենը մեկ հնչյուն ենք, այդ ինչն
դարձանք անտեսանելի և լսելի ենք դառնում միայն այն պա-
հին, երբ խոսում ենք: Դարձանք անձար ու ոչպիտանի: Հիմա
ինչ պիտի անենք:

- Չէի ասի, որ պիտանի չենք,- հակադարձեց Ռե եղբայրը:-
Մեզանից յուրաքանչյուրը հիմա ունի իր հատուկ ձայնը, ու
եթե կարողանանք ներդաշնակ խոսել միմյանց հետ, կստացվի
գեղեցիկ երաժշտություն, և մենք պիտանի կդառնանք մարդ-
կանց համար:


- Բայց ինչպես անենք, որ ներդաշնակ ձայնակցենք միմ-
յանց,- հետաքրքրվեց Մի եղբայրը: Միտք, յուրաքանչյուրս ցան-
կանում է, որ առաջինը ինքը ձայն հանի և որքան հնարավոր
է՝ բարձր...


- Ճիշտ է ասում Մին,- վրա բերեց Ֆա եղբայրը: - Երբ ես
ցանկանում եմ հնչյուն հանել, ինձնից փորձում է առաջ ընկ-
նել Լյան և չի թողնում, որ բերանս բացեմ: Էլ չեմ խոսում Մի
եղբորս մասին, ով ամենա ձղձղան ու սուր ձայնն ունի և միշտ
ցանկանում է բոլորիցս առաջ հնչել:

Սուլ եղբայրը, որն ամենակազմակերպվածն էր և միշտ էլ
առաջնորդել էր իր եղբայրներին, ներկայացրեց, թե ինչպես
պետք է լուծել նրանց միջև ծագած վեճը:

- Միրելիններս,- իրեն հատուկ հանդարտ խոսքով դիմեց
Սուլը եղբայրներին: - Ես հասկանում եմ, որ յուրաքանչյուրիդ
ձայնը շատ գեղեցիկ է, և դուք փորձում եք հենց առաջինը
հնչել ու ներկայանալի դառնալ երաժշտության ժամանակ:
Բայց այդ դեպքում երաժշտությունը չի ստացվում, այն ըն-
դամենը դառնում է տհաճ հնչյունների մի կույտ, որին ոչ ոք
չի ցանկանում ունկնդրել: Ես գիտեմ, որ դուք շատ չարաձ-
ճի եք և չեք զիջելու միմյանց՝ մշտապես փորձելով առաջինը
հնչել: Այդ իսկ պատճառով՝ յուրաքանչյուր երաժշտության
ընթացքում ձեզ կտեղավորեն հատուկ տողերի վրա և թույլ
չեն տա, որ ինքնագլուխ մեկդ մյուսից առաջ ընկնեք:







- Այդ ինչպէս,- խմբով հետաքրքրվեցին նոտա դարձած եղբայրները:

- Թղթի վրա կնկարեն հինգ զուգահեռ գծեր ու դրանց վրա ձեզ հստակ տեղեր կհատկացնեն այնպես, որ հնչեք ձիշտ տեղում և ձիշտ ժամանակին: Իսկ որպէսզի ինքնագլուխ չտեղաշարժվէք ու երաժշտությունը չփչացնեք, տեղում ձեզ կկողպեն իմ բանալիով,- պատասխանեց իմաստուն Սուր:

Ու հենց այդ պահից մարդիկ երգելիս կամ երաժշտական գործիքների վրա նվագելիս սկսեցին կիրառել նոտագրումը՝ հինգ գծերի վրա տեղադրելով նոտաներ դարձած Դո, Ռե, Մի, Ֆա, Սոլ, Լյա, Սի եղբայրներին: Բոլորն էր վստահ էին, որ նոտաներից ոչ ոք չի խախտի նախօրոք հատկացված իր տեղն ու ձայն հանելու պահը, քանի որ Սուր իր բանալիով կողպում է յուրաքանչյուր եղբորը՝ թույլ չտալով առանց իր թույլտվության հնչելու:

Եթե չեք հավատում ինձ, կարող եք կարդալ երաժշտության նոտագրման տողերը ու կհամոզվէք, որ դրանցից յուրաքանչյուրը միշտ սկսվում է Սուլի բանալիով:





ԹԵ ԻՆՉՈՒ ԱՌԱՋԻՆ ՋՈՒԹԱԿԸ ԴԱՐՁԱՎ ԱՌԱՋՆՈՐԴ





Կար մի ժամանակ, երբ երաժշտական գործիքները չէին սիրում միմյանց և միշտ վիճում էին, հատկապես նվագախմբային երաժշտությունից առաջ: Առանձնապես կովարար էին փողային գործիքները՝ հոբոյը, կլառնետը, գալարափողը, տրոնբոնը, որոնք պնդում էին, որ կարող են ամենաբարձր հնչյունները հանել, ուստի մնացած բոլոր երաժշտական գործիքները պետք է ենթարկվեին իրենց: Պակաս գլուխ գովան չէին նաև հարվածային գործիքները՝ թմբուկը, լիտավրը, քսենոֆոնը, մետաղաֆոնը՝ փորձելով համոզել բոլորին, որ առանց իրենց հուժկու դմբդմբոցների՝ ցանկացած սիմֆոնիկ երաժշտություն պարզապես չէր դառնա տպավորիչ:

Իսկ լարային գործիքները համեստորեն լռում էին, քանի որ չէին կարողանում համերգների ժամանակ հուժկու ձայներ արձակել, բայց, միևնույն է, ամբողջ երաժշտության ընթացքը մարդիկ վստահում էին իրենց, և, որպես կանոն, լարայիններից ջութակներն էին հնչեցնում հիմնական մեղեդին: Դե, պարզից էլ պարզ էր, որ այս ամենը նախանձ պիտի առաջացներ երաժշտական մյուս գործիքների մեջ, որոնք նույնպես կուզենային առաջատար լինել նվագախմբում:

Եվ ահա մի գիշեր, երբ ամբողջ երաժշտանոցը թվում է, թե քնած էր, վեճ սկսվեց սիմֆոնիկ նվագախմբի գործիքների միջև:

- Սա ի՞նչ բան է,- իրենց բարձր հնչյուններով բողոքում էին փողային գործիքները,- ղվ է տեսել, որ նրբիկ ջութակներին պետք է միշտ վստահել հիմնական մեղեդին, իսկ մենք, չափ-





սերով այսքան մեծ ու հնչյունային բարձր տոնայնությամբ, ընդամենը պետք է ձայնակցենք ամբողջ համերգի ընթացքում: Չէ, այսպես չի լինի, հաջորդ սիմֆոնիկ համերգին հաստատ փոխվելու ենք տեղերով, և ջութակների փոխարեն մենք ենք հնչեցնելու հիմնական մեղեդին:

- Այդ ինչ եք ասում,- միջամտեց ստեղնավոր գործիքներից կլավեսինը, եթե ամբողջ սիմֆոնիան կատարվի ձեր բամբ և ուժգին ձայներով, երաժշտությունը պարզապես կվերածվի ամբոխից եկող գոռգոռոցների, և ունկնդիրը շատ կհոգնի այս ամենից: Պետք է, ինչպես միշտ, ջութակների հնչյունները դրվեն սիմֆոնիկ մեղեդիի հիմքում և դրանով նրբաձաշակ երաժշտություն ստեղծեն:

- Չէ, միևնույն է, մեզ չէք համոզի, հենց հաջորդ երաժշտական փորձին մենք ենք հնչեցնելու հիմնական մեղեդին,- չհամաձայնեցին փողային գործիքները և քուն մտան՝ պատրաստվելով հաջորդ օրվա համերգային փորձին:

Առավոտյան, լույսը բացվելուն պես, երաժշտական գործիքները զարթնեցին և անհամբեր սպասելով դիրիժորին, գնացին փորձի: Հատկապես անհանգիստ էին փողային գործիքները, որոնք երաժշտախմբի հետին շարքերից առաջ էին եկել և զբաղեցրել ջութակների տեղը՝ հույս ունենալով, որ ամբողջ սիմֆոնիայի մեղեդին իրենք են հնչեցնելու:

Երբ դիրիժորը մտավ երաժշտանոցի փորձասենյակ, զարմանքից բացականչեց:

- Սա ինչ նորություն է, ինչո՞ւ են ջութակները հետ քաշվել՝ իրենց տեղը զիջելով փողայիններին:

- Մենք ենք այդպես որոշել,- բամբ ձայնով պատասխանեցին փողային գործիքները,- շատ անարդար է, որ ամեն անգամ ջութակներն են հնչեցնում սիմֆոնիայի հիմնական մեղեդին, իսկ մենք ընդամենը ձայնակցում ենք մեր հնչողությամբ:

- Այո, դա այդպես է,- բացատրեց դիրիժորը,- անշուշտ, ջութակներն են հիմնականում հնչեցնում մեղեդին, բայց, իմ սիրելի փողային գործիքներ, դուք էլ շատ կարևոր եք, քանի որ ձեր բարձր հնչեղությամբ ավելի գեղեցիկ ու տպավորիչ եք դարձնում երաժշտությունը: Այնպես որ, առանց ձեզ չեն կարող տպավորիչ



մեղեդի նվագել:

- Չէ, մի՛ փորձեք մեզ համոզել,- հակադարձեց փողային գործիքներից հոբոյը,- ինչ էլ, որ լինի, այսօրվա փորձի ժամանակ մենք ենք հնչեցնելու հիմնական մեղեդին:

- Շատ լավ,- համաձայնեց դիրիժորը,- դե, սկսեցի՛նք:

Դիրիժորի ձեռքի շարժումով սկսվեց նվագախմբի փորձը: Անընդմեջ հնչում էին փողային գործիքների հուժկու հնչյունները: Մերթ հոբոյն էր բարձր նվագում, մերթ իր բամբ հնչեղությանը բոլորին գերազանցում էր տրոնբոնը, գալարափողն էլ իր բարձր նոտաներով բնավ չէր զլանում աջակցել իր ընկերներին: Եվ այս ամենին գումարվում էր նաև հարվածային գործիքների դմբդմբոցը, և, դրանով իսկ, նվագախմբի հետնամասում հայտնված նուրբ և համեստ ջութակների մեղեդին գրեթե չէր լսվում:

Վերջապես նվագախմբի փորձն ավարտվեց, և դիրիժորը դիմեց փողային գործիքներին:

- Հիմա ի՛նչ կասե՛ք, գո՛հ եք այս ամենից:






- Իհարկե, գոհ ենք,- ինքնահավան պատասխանեցին փողային գործիքները:


- Իսկ ես շատ դժգոհ եմ,- զայրույթով հակադարձեց դիրիժորը,- ամբողջ սիմֆոնիան ձեր հուժկու հնչյուններով ուղղակի վերածեցիք աղմուկի և ամբողջական մեղեդին շատ կոպիտ հնչեցրիք:

- Միևնույն է, մենք չենք նահանջելու և համերգի ժամանակ էլ վարվելու ենք այսօրվա պես,- իրենց անհամաձայնությունը հայտնեցին հոբոյը, կլառնետը, տրամբոնն ու գալարափողը:

Լսելով այս ամենը, դիրիժորը հասկացավ, որ փողային գործիքներին պետք է ի վերջո կարգի հրավիրել և մտահոգված հայտարարություն արեց:

- Այսօրվանից նվագախմբում հատուկ կարգապահություն եմ կիրառելու և ձեզ ղեկավարելու եմ դիրիժորական փայտիկով, որը կախարդանքի ուժ ունի: Հենց այդ փայտիկի ցուցումներով դուք կգբաղեցնե՛ք ձեր տեղերը, կհնչեցնե՛ք ձեր մեղեդին: Հենց այդ փայտիկը ձեզ կհուշի, թե երբ եք բարձրացնելու կամ ցածրացնելու ձեր կողմից հնչեցվող ձայները ու երբ եք մուտք գործելու երաժշտության այս կամ այն կտորի մեջ: Ասեմ ավելին,





առաջին ջութակին նշանակում են այս կարգ ու կանոնի կիրառման պատասխանատու, ու բոլորդ համերգի ժամանակ ոչ միայն հետևելու, այլև ենթարկվելու եք նրան: Նա կլինի նվագախմբի գործիքների առաջնորդը:

Եվ այսպես, արդեն հարյուրամյակներ ջութակը դարձավ նվագախմբի գործիքների առաջնորդը և ընդամիշտ լուծեց նրանց միջև ծագող վեճերը:

Սիրելի երեխաներ, փորձեք հնարավորինս շատ հաճախել սիմֆոնիկ համերգների: Դահլիճում նստած և համերգի մեկնարկին սպասելիս հետևեք երաժշտական գործիքներին: Կտեսնեք, որ, իսկապես, ամեն անգամ ելույթը սկսելուց առաջ, բոլոր գործիքները ենթարկվում են առաջին ջութակի արձակած «ֆա» նոտային ու դրանով կարգավորում իրենցից արձակվող հնչյունները:

Իսկ երբ դիրիժորը իր կախարդական փայտիկով մոտենում է ղեկավարման վահանակին, անպայման սեղմում է առաջին ջութակի ձեռքը: Եվ գիտե՞ք, թե ինչու: Դրանով ի ցույց է դրվում բոլորին, որ ամեն ինչ կարգավորված է, երաժշտական գործիքները համերաշխ են և հետևելով առաջնորդող ջութակին՝ պատրաստ են համերգին, յուրաքանչյուրը իր տեղում և իր գործով առանց որևէ ավելորդ վեճի բռնվելու:



ԹԵ ԻՆՉՈՒ ՄԱՐԴԻԿ ՍԿՍԵՑԻՆ ԵՐԳԵԼ

Կար մի ժամանակ, որ մարդիկ չէին երգում և հաղորդակցվում էին միայն բանավոր խոսքով: Դա շատ վաղուց էր, երբ բոլորն ապրում էին քարանձավներում և չունեին այսօրվա հարմարավետ բնակարանները: Իսկ գիտե՞ք, թե որքան դժվար էր ապրել քարանձավներում: Այնտեղ միշտ ցուրտ էր, ու որպեսզի չմռսեին, նախնադարյան մարդիկ կրակ էին վառում, նստում էին խարույկի շուրջը ու ժամերով նայում, թե ինչպես են պար գալիս վառվող կրակի բոցերը:

Գիտե՞ք, սիրելի երեխաներ, այդ հիմա է, որ վառվող խարույկը բակային ճամբարների կամ արշավների ժամանակ ձեզ համար ընդամենը ուրախ ժամանցի միջոց է: Քարանձավային մարդու համար այն պարզապես գոյատևման անհրաժեշտություն էր, և առանց կրակի՝ կյանքը հաստատ կանգ կառներ:

Եվ այսպես, ամեն երեկո մարդիկ շրջանաձև նստում էին քարանձավի ներսում վառվող խարույկի շուրջը ու ժամանակ էին անցկացնում, պատմում օրվա անցուդարձի մասին, տաքանում և ժամերով դիտում պար եկող կրակի բոցերը: Բայց արի ու տես, որ չար քամին ժամանակ առ ժամանակ ներխուժում էր քարանձավ ու հանգցնում կրակը՝ մարդկանց դնելով դժվար կացության մեջ: Չէ՞ որ քարանձավները պարզապես դուռ չունեին, որ փակեին անկոչ քամու ներխուժումը ներսում վառվող կրակի մոտ, և խեղճ մարդկանց մնում էր ընդամենը փորձել բարձր գոռգոռոցներով վախեցնել ու դուրս վռնդել կամակոր քամուն: Բայց, ավանդ, քամուն դա բնավ էլ չէր վախեցնում, նա





շարունակում էր անել իր սև գործը և, հանգցնելով կրակը, ինքնագոհ սվսվոցով դուրս էր գալիս քարանձավից:

Եվ ահա, օրերից մի օր, երբ նորից անգույթ քամին ներխուժեց քարանձավ, որպեսզի հերթական անգամ հանգցնի վառվող կրակը, մարդիկ վախեցնող և անկանոն գոռգոռոցների փոխարեն, սկսեցին խմբով բարձրաձայն երգել: Լսելով գեղեցիկ խմբերգը, քամին ապշահար կանգ առավ. «Այս ինչ գեղեցիկ հնչյուններ են, ինչ հաճելի է ունկնդրել այս ամենը»,– մտածեց քամին ու հանդարտվեց՝ ինքն էլ փորձելով տեղավորվել կրակի շուրջը նստած մարդկանց շարքերում: Դե, մարդիկ էլ տեսան, որ երգով կարելի է սանձել քամուն, ու որոշեցին շարունակել խմբերգը և դրանով պահել կրակը:

Իհարկե, քամու ներկայությունը էլ ավելի բորբոքեց քարանձավում վառվող կրակը, որի բոցերը սկսեցին վեր բարձրանալ և ավելի աշխույժ պարի բռնվել միմյանց հետ: Ու երբ այս ամենը զուգորդվեց մարդկանց շարունակական երգով, շուրջ բոլորը բարձր տրամադրություն ստեղծվեց, մարդիկ ոգևորված սկսեցին ավելի համարձակ երգել և այդ օրվանից հասկացան, որ կարելի է նաև երգով ու երաժշտությամբ հաղթահարել թե՛ դժվարությունները և թե՛ նշել ուրախությունները:

Ստացվեց այնպես, որ մարդկանց խմբերն ու անհատները սկսեցին իրենց ցանկություններն ու զգացմունքները արտահայտել ոչ միայն խոսքով, այլև երգեցողությամբ: Եկեք հիշենք, թե պատերազմող բանակները ռազմի դաշտում կռիվ գնալիս ինչպիսի հայրենասիրական երգեր էին կատարում՝ քաջարի մարտիկների երգով օդը լցնելով խրոխտ երաժշտությամբ: Կամ հենց այսօր, հարսանիքների ժամանակ, ինչպես են մարդիկ երգում՝ խոսքերի փոխարեն, իրենց ուրախությունը երգելով փոխանցելով հարսին ու փեսային:

Եվ այսպես, սիրելի՛ երեխաներ, մարդիկ այսօր էլ իրենց ցանկություններն ու զգացմունքները միմյանց հայտնում են նաև երգի միջոցով: Հեքիաթից հասկացանք, որ այդ ամենը սկիզբ էր առել վաղուց, շատ վաղուց, երբ չկային նոտաներ, երաժշտական գործիքներ, բայց կար մեղեդի ստեղծելու և երգելու անզուսպ ու երանելի ցանկություն...




ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՏԵՂԾՎԵՑ ՕՊԵՐԱՆ

Սիրելի՛ երեխաներ, եթե ձեզ բախտ է վիճակվել հաճախել օպերա կամ գոնե այն դիտել հեռուստացույցով, միգուցե առաջին անգամ զարմացել եք, թե ինչո՞ւ են արտիստները՝ մի կողմ թողնելով իրենց սովորական խոսելաձևը, միմյանց հետ անընդմեջ երգելով խոսում: Միգուցե ձեր մեջ հարց առաջանա, թե ինչո՞ւ է ներկայացման ժամանակ հրավիրվում սիմֆոնիկ նվագախումբ, կամ թե ինչո՞ւ են, որպես կանոն, երգում իտալերեն, ու հանդիսատեսը, չիմանալով այդ լեզուն, կարծես ամեն ինչ հասկանում և հաճույք է ստանում օպերայից: Այս «թե ինչունների» պատասխանները կիմանաք, եթե հենց հիմա լսեք իմ հեքիաթը օպերայի մասին:

Լինում է, թե չի լինում՝ մի թագավոր, ով ուներ սիրելի թագաժառանգ: Թագավորն ու որդին շատ էին սիրում որս անել Իտալիայի անտառներում և հաճախ էին արքայական շքախմբով օրերով շրջում գեղատեսիլ անտառներով, կանաչապատ մարգագետիններով՝ որսալով վայրի կենդանիներ: Թագավորական շքախումբը բազմամարդ էր՝ կազմված արքունիքի զինվորներից և որսորդական շներից, որոնք աղմուկ-աղաղակով հայտնվում էին անտառի գողտրիկ անկյուններում և անհանգստացնում այնտեղ ապրող բոլոր վայրի կենդանիներին ու թռչուններին:

Տարօրինակն այն էր, որ թագավորական որսի ժամանակ շքախումբն ամենևին չէր նկատում բնության գեղատեսիլ անկյունները, չէր էլ փորձում լսել թռչունների երգեցիկ ծլվլոցը, կարևորություն չէր տալիս արագահոս առվակների ձայներին կամ սիրահարված եղջերուների բառաչներին: Իսկ այդ բոլորը այնքան





գեղեցիկ էր, որ ուղղակի պետք էր որսը թողնել ու ժամերով վայելել բնության ձայների ու գեղատեսիլ վայրերի սիմֆոնիան:

Բայց, ավանդ, թագավորական շքախումբը, արքայի ու թագաժառանգի գլխավորությամբ, մշտապես որսի էր դուրս գալիս, հետաքրքրված լինելով բացառապես որսի ավարով, վայրկյան անգամ չնկատելով բնության չքնադագույն գեղեցկությունը: Եվ, ահա, մի օր որսորդները քարափի վրայից ներքև նայեցին և ականատես եղան մի սքանչելի տեսարանի:

Մարգագետնում արածում էին եղնիկները՝ իրենց ձագերի հետ միասին վայելելով թարմ կանաչ խոտը: Քիչ այն կողմ վայրի վարազներն էին խումբ-խումբ հավաքված՝ իրենց կճղակներով փորելով գետինը և սնվելով բույսերի հյութալի արմատներով: Իսկ վերևում ժպտում էր արեգակը, որն իր պայծառ շողերով ջերմացնում էր շուրջբոլորը, ողջունում մարգագետնի միջով անցնող առվակին: Դե, առվակն էլ իր հերթին՝ ուրախ քրքջոցով անընդհատ ջերմագին ողջուններ էր ուղարկում վառվռուն արեգակին:

Այս ամենը ուղեկցվում էր թռչունների ուրախ ծվլոցով, և բնության այդ գողտրիկ անկյունը կարծես նմանվում էր մի գունագեղ ներկայացման, որտեղ մեկտեղվել էին հովտային գեղեցիկ տեսարանները, բնության երգեցիկ հնչյունները, վայրի կենդանիների ու թռչունների ուրախ ձայները, որոնք չնայած իրար խոսք չէին հասկանում, սակայն կիսվում էին բնության գեղեցկությամբ:

Իհարկե, թագավորական շքախումբը բնավ ուշադրության չարժանացրեց այս գեղեցիկ տեսարանը, քանի որ հետաքրքրված էր միայն որսով: Քարափի բարձունքից հանկարծ հնչեցին կրակոցներ, մարգագետնի վրա որսորդական հրացաններից արձակած երկաթե անձրև տեղաց, բոլոր կենդանիները սպանվեցին, հրացանների որոտից և վառողի ծխից վախեցած թռչունները մեկ ակնթարթում թռչեցին ու փախան: Շուրջբոլորը կարծես միանգամից ամայացավ, անգամ չէր լսվում մարգագետնով անցնող առվակի ուրախ քրքջոցը:

Տխրություն իջավ մարգագետնի վրա: Փոխարենը շատ ուրախ էին թագավորն ու թագաժառանգը, որոնք քարափից իջնելով

մարգագետին, ինքնագոհ հպարտանում էին որսի ավարով և սպանված եղնիկների ու վարագների քանակով:

Եվ հանկարծ թագավորը այդ պահին նկատեց, որ թագաժառանգի դեմքը աստիճանաբար վայրի վարագի տեսք է ընդունում, իսկ մի քանի բոլբոլ անց, թանգաժառանգը կախարդանքի ուժով դարձավ վարագ և սկսեց խոխոռացնել՝ փորձելով խոսել մարդկանց հետ: Պարզից էլ պարզ էր, որ թագաժառանգին պատժել էր անտառային կախարդը:

Վերադառնալով պալատ, թագավորը իր մոտ կանչեց երկրի իմաստուններին, որպեսզի մի ճար անեն՝ փրկելու թագաժառանգին:

– Պետք է գնալ անտառ, գտնել կախարդին և խնդրել, որ հանի կախարդանքը թանգաժառանգի վրայից,– որոշեց ավագ իմաստունը:

Այդպես էլ արեցին: Թագավորական շքախումբը մեկնեց անտառ, բայց այս անգամ ոչ թե որսի, այլ կախարդին որոնելու ու նրա հետ հանդիպելու: Իտալական անտառներից մեկում արքան վերջապես հանդիպեց կախարդին:


– Ես գիտեմ, որ դու ես կախարդել իմ որդուն և դարձրել վարագ, ասա՛, ինչո՞ւ այդ արեցիր,– սրտնեղված դիմեց արքան կախարդին:

– Ձերդ մեծություն, այո, ես եմ պատժել թագաժառանգին և նաև Ձեզ: Ու գիտե՞ք, թե ինչու: Դո՛ւք՝ արքաներդ, միայն մտածում եք անձնական հաճույքների մասին և, հանուն դրա, ձեր ճանապարհին փչացնում ու կործանում եք ամեն ինչ: Նույնը արեցիք վերջին որսի ժամանակ, երբ ամբողջապես ավերեցիք բնության մի գեղեցիկ անկյուն: Ա՛յ, երբ սովորե՞ք գնահատել գեղեցկությունը, ես հետ կվերցնեմ իմ կախարդանքը, և թագաժառանգը նորից մարդու տեսք կունենա,– պատասխանեց անտառային կախարդը:

– Իսկ ինչպե՞ս գնահատենք գեղեցկությունը, ամխար այնպիսի դժվար բան եք ասում,– հուզված դիմեց արքան կախարդին:

– Ոչ մի դժվար բան էլ չեմ տեսնում իմ հանձնարարության մեջ: Այ դու՛ք, մի բոլբոլ ընթացքում ավերեցիք բնության գեղեցկությունը, լռեցրիք անտառային ձայները, ոչնչացրիք կենդանի-





ներին, որոնք համերաշխ էին և իրենց ներկայությամբ լրացնում էին բնության այդ գեղատեսիլ անկյունը: Վերադարձե՞ք պալատ և մտածե՞ք, թե ինչպե՞ս կարելի է հենց ձեր՝ թագավորական հրամանով ստեղծել մի այդպիսի գողտրիկ և երգեցիկ միջավայր, որը կլինի շատ գեղեցիկ և կգնահատվի մարդու կողմից,– իր հորդորը ներկայացրեց պալատական շքախմբին կախարդը ու հեռացավ:

Թագավորական շքախումբը գլխիկոր վերադարձավ պալատ, և արքան հրամայեց օրնիիբուն աշխատել, որպեսզի կատարեն անտառային կախարդի հանձնարարությունը: Վերջապես պալատական իմաստունները մոտեցան թագավորին լավ լուրով:

– Ձերդ մեծություն, միասին շատ աշխատեցինք և որոշեցինք բեմադրել մի ներկայացում, որտեղ կմեկտեղվեն գեղագիտական շատ արժեքներ, և, վստահ եղեք, որ այն հաստատ դուր կգա անտառային կախարդին:

– Այդ ինչպե՞ս,– զարմանքով հետաքրքրվեց թագավորը:

– Ձերդ մեծություն,– պատասխանեց ավագ իմաստունը: – Մեր պատկերացումներով, այդ ներկայացմանը պետք է մասնակցի սիմֆոնիկ նվագախումբ, որն իր հրաշագեղ հնչյուններով կփոխարինի անտառային ձայներին, կլինեն գունագեղ բեմական դեկորացիաներ, որոնցով հնարավոր կլինի ցուցադրել բնության գեղատեսիլ անկյուններ: Դե իսկ դերասանները ոչ թե կխոսեն, այլ կերգեն, չէ՞ որ անտառի թռչունները խոսել չգիտեն, բայց փոխարենը գեղեցիկ հնչյուններով երգում են: Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ այս բոլորի մեկտեղումը դուր կգա անտառային կախարդին:

– Հրաշալի գաղափար,– ոգևորվեց թագավորը,– իսկ ինչպե՞ս անվանել բեմադրության այդ ձևը:

– Օպերա, Ձերդ մեծություն, օպերա,– միահամուռ ողջունեցին բոլորը:

Սիրելի երեխաներ: Իսկ գիտե՞ք, թե ինչո՞ւ հենց «Օպերա»: Իտալերենից թարգմանաբար «աշխատանք» բառը հնչում է «operari»: Եվ, իրոք, օպերա բեմադրելը հեշտ բան չէր: Նրանում մասնակցում էին տասնյակ դերասաններ, երգիչներ, երաժիշտներ, նկարիչներ, դերձակներ, որոնք ջանք ու եռանդ չէին

խնայում գեղագիտական միջավայր ստեղծելու և անտառային կախարդին հաճոյանալու համար:

Վերջապես բեմադրության նախապատրաստական աշխատանքներն ավարտվեցին, և հենց թագավորական պալատին կից դահլիճում մեկնարկեց օպերայի առաջնախաղը: Ամեն ինչ շատ գեղեցիկ էր: Ճաշակով երաժշտություն, գեղեցիկ մեներգեր և խմբերգեր, գունագեղ բեմական հագուստ, նկարազարդումներ, սինֆոնիկ նվագախումբ: Բեմը ողողված էր պայծառ լույսերով, կարծես արև էր կախված առաստաղից: Օդը հագեցած էր բարձրաձայն մեղեդիով:

Երբ օպերան ավարտվեց, բոլորը շատ հուզված էին այդ գեղեցիկ բեմադրությունից: Իսկ թագավորի հուզմունքը կրկնակի էր: Իր աչքերի առջև հրաշք էր կատարվում, և վարազ դարձած թագաժառանգը աստիճանաբար մարդու տեսք էր ստանում: Երևում էր, որ օպերան դուր էր եկել նաև անտառային կախարդին:

Այդ օրվանից թագավորը հրաման արձակեց օպերային ներկայացումների բեմադրման համար, և այդ արվեստը դուրս եկավ արքունիքից ու տարածվեց ամբողջ երկրով մեկ: Երկրի թատերաբեմերում սկսեցին ցուցադրվել ոչ միայն թատերական ներկայացումներ, այլև օպերաներ, որտեղ արտիստները երգում էին իտալերեն:

Դե, իհարկե, այդ լուրը տարածվեց Իտալիայի սահմաններից դուրս և երկրից երկիր անցավ: Օպերա սկսեցին ստեղծագործել բոլոր ազգերը և իրենց ազգային լեզուներով բեմադրել: Սիրելի երեխաներ, անպայման դիտեք Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան և այնտեղ առիթ կունենաք վայելելու մեր հայրենի լոռվա բնաշխարհի ու հայկական բանահյուսության գեղեցկությունը:

Հա, քիչ մնաց մոռանալի: Իսկ դուք գիտե՞ք, թե ինչու է ամեն օպերա սկսվում սինֆոնիկ նվագախմբի նախերգանքով: Եթե չգիտեք, ապա պիտի՛ ասեմ, որ այդ գեղեցիկ երաժշտությամբ ամեն անգամ հիշեցնում են անտառային կախարդին, որ օպերան սկսվեց, որ մարդիկ շատ են գնահատում իրենց շրջապատող գեղեցկությունը, ամենուր ցուցադրում են այն երգեցիկ ներկայացումներով, ուստի այլևս կարիք չկա կախարդանքով պատժել որևէ մեկին:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թե ինչու առաջացան նոտաները	2
Թե ինչու առաջին ջութակը դարձավ առաջնորդ	10
Թե ինչու մարդիկ սկսեցին երգել	18
Թե ինչպես ստեղծվեց օպերան	22